Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԿՈՏՈԼՅԱՆԻ, ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԵՎ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ ԼԻԱՆՆԱ ԱՆԱՆՅԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-ԻՑ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ը ԼԱՏՎԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ՌԻԳԱ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Կոտոլյան Արմեն - Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) ղեկավար,

Արթուր Մկրտչյան – Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ,

Լիաննա Անանյան – Տեսչական մարմնի փորձագետ:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Լատվիայի Հանրապետություն, Ռիգա, 2025թ. դեկտեմբերի 15-ից մինչև ս.թ. դեկտեմբերի 18-ը ներառյալ:

3.Հրավիրող կողմը.

Լատվիայի Հանրապետութուն (Ռիգա), Սպառողների իրավունքների պաշտպանության կենտրոն:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղման նպատակն էր մասնակցելու էլեկտրոնային վաճառքի վերահսկողության ոլորտում ուսումնաճանաչողական այցի: Տեսչական մարմինը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության որակի ենթակառուցվածքի 2026-2031թթ. Ազգային ռազմավարական ծրագրի կատարումն ապահովող գործողությունների ծրագիրը (այսուհետև՝ Ծրագիր), անհրաժեշտություն համարեց իրականացնել ուսումնական այց, որի շրջանակում ձեռք բերվեցին գիտելիքներ էլեկտրոնային վաճառքի վերահսկողության

ոլորտում լավագույն փորձի վերաբերյալ: Ձեռք բերված գիտելիքները կծառայեն Ծրագրում ներառված գործողությունների հետագա զարգացմանը:

5. Քննարկված թեմաները.

- Սպառողների իրավունքները էլեկտրոնային առևտրում,
- ԵՄ իրավական շրջանակը՝ էլեկտրոնային վաճառքի ոլորտում,
- Ապրանքների ընդհանուր անվտանգության կանոնակարգ,
- Էլեկտրոնային վաճառքի վերահսկողություն՝ ապրանքների անվտանգություն և համապատասխանություն,
- Վերահսկման մեխանիզմներ («թաքնված գնորդ» և այլ գործիքներ),
- Մաքսային մարմնի և շուկայի վերահսկողության համագործակցության թվայնացված ծրագրի ներկայացում,
- 2025թ. ընթացքում AliExpress, Temu, Shein հարթակներում կատարված ստուգումների արդյունքների ու մարտահրավերների ներկայացում: Նշված էլեկտրոնային հարթակներից նմուշառված ապրանքների ստուգման արդյունքների վերաբերյալ քննարկում:
- E-LAB համակարգի ծանոթացում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Էլեկտրոնային վաճառքի վերահսկողությունը գլոբալ և զարգացող խնդիր է բոլոր երկրներում, ուստի համատեղ ջանքեր են հարկավոր վտանգավոր ապրանքների՝ հատկապես առողջությանը վնասակար և խոցելի խմբերի համար (երեխաներ, մեծահասակներ) նախատեսված ապրանքների վաճառքը սահմանափակելու նպատակով:

Կարևորվեց իրազեկման արշավների դերը՝ օնլայն տիրույթում վաճառվող ապրանքների վտանգավորության, ռիսկերի և ազդեցության վերաբերյալ հասարակությանը տեղեկացնելու համատեքստում:

Քննարկվեցին էլեկտրոնային վաճառքի վերահսկողությունը կարգավորող ԵՄ կանոնակարգերը, որոնք կուսումնասիրվեն տեսչական մարմնի կողմից՝ հետագա մոտարկման հնարավորությունները գնահատելու նպատակով:

Անդրադարձ կատարվեց Լատվիայի փորձառությանը, այն է՝ երբ մաքսային մարմինը, փոստային ծառայությունը և շուկայի վերահսկողության մարմինը համատեղ իրականացրել են սահմանային վերահսկողություն՝ ստուգելով օնլայն տիրույթով պատվիրված ապրանքների վտանգավորության աստիճանը:

Օգտակար քննարկում է ծավալվել թվայնացված ծրագրի շուրջ, որի համաձայն մաքսային մարմինը տրամադրել է ծրագրին ամբողջական հասանելիություն նաև շուկայի վերահսկողության մարմնին, ինչը հնարավորություն է տալիս խուսափել սահմանին հերթերի կուտակումներից, խնայել ժամանակ, նվազեցնել և/կամ բացառել ավելորդ փաստաթղթավորումը և արագ արձագանքել խնդրին՝ գնահատելով տվյալ ապրանքի վտանգավորությունը և շուկա մուտք գործելու ռիսկերը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ձեռք է բերվել պայմանավորվածություն հետագա համագործակցության շարունակման վերաբերյալ: Լատվիայի գործընկերները հայտնել են պատրաստակամություն՝ անհրաժեշտության դեպքում քննարկված թեմաների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն և աջակցություն տրամադրելու համար: Փաստաթուղթ չի ստորագրվել:

8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Տեսչական մարմինը կուսումնասիրի հանդիպումների ընթացքում քննարկված և գործընկերների կողմից տրամադրված բոլոր նյութերը և կսկսի համապատասխան գործողությունների պլանավորումը ՀՀ էլեկտրոնային վաճառքի վերահսկման ճանապարհային քարտեզի զարգացման ուղղությամբ՝ սահմանելով առաջնահերթությունները:

Recoverable Signature

X

ԱՐՄԵՆ ԿՈՏՈԼՅԱՆ

Signed by: KOTOLYAN ARMEN 3810870129

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

23.12.2025թ.